

**ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

ԳԵՎՈՐԳՅԱՆ Մ. Հ.

Գրիգոր Զոհրապի բացառիկ բազմաբնույթ գործունեությունը որքան էլ հայտնի է, սակայն ուսումնասիրության կարիք ունի: Նրա գեղարվեստական ժառանգության վերաբերյալ գրականագիտական հիմնավոր հետազոտություններ շատ կան, մինչդեռ գործունեության մյուս՝ փաստաբանական, հասարակական, քաղաքական, ազգային ոլորտների մասին ստիպված ենք բավարարվել միայն հիշատակումներով: Հայ հասարակական մտքի պատմությունից դեռևս դուրս են մնում Զոհրապի իրավական հայացքների, օրենսդրական, ազգային, քաղաքական գործունեության բազում խնդիրների վերաբերյալ անհրաժեշտ հետազոտություններ:

Գրիգոր Զոհրապի գործունեության ժամանակաշրջանը Օսմանյան կայսրության մայրամուտն էր՝ հարուստ հասարակական-քաղաքական բուռն փոփոխություններով և հղի ողբերգական, ճակատագրական հետևանքներով արևմտահայության համար: Նրա գործունեության յուրաքանչյուր բնագավառ առանձին ուսումնասիրության նյութ է: Ինչ վերաբերում է նրա իրավաբանական, իրավագիտական և օրենսդրական աշխատանքի անդրադարձին, ապա հարկ է նշել, որ Զոհրապը, ստանալով հիմնավոր իրավաբանական կրթություն, երիտասարդ տարիքից իսկ հայտնի իրավաբան էր, իսկ պատմական իրադարձությունները նրան առաջ մղեցին նաև իբրև օրենսդիր (1908 թ. հետո), երբ օսմանյան խորհրդարանում որպես երեսփոխան հնարավորություն ունեցավ զբաղվելու օրենսդրական գործունեությամբ: Մինչ այդ Զոհրապը հեղինակում էր կարևոր իրավագիտական ուսումնասիրություններ: 1883 թ. նա թուրքերեն հրատարակում է իր անդրանիկ իրավաբանական աշխատությունը՝ «Շամանցում» («Մյուրուրի գեմանի»)՝ վերնագրով: 1892 թ. «Մասիս»-ում տպագրում է «Մամուել Մուրատի կտակն ու Միսիրարյան Միաբանությունը օրենքի առջև» ուսումնասիրությունը: Հետագոտելով բարերարի կտակի իրավաբանական խնդիրները՝ Զոհրապն առաջարկում է, որ «ազգային իշխանությունը Մասնախումբ մը կազմե՝ դատավարական եղանակը վերջապես ճշտելով գործի սկսելու համար»<sup>2</sup>: 1908 թ. մայիսին Փարիզում «Իրավունքի և իրավաբանության գրադարան» մատենաշարով լույս է տեսնում «Հպատակութեան տարբերութեան աղագաւ ժառանգելու անհնարինությունը ըստ Օսմանեան օրինաց.

<sup>1</sup> Ալպոյաճյան Ա., Անհետացող դեմքեր, Գ. Զոհրապ, Կ. Պոլիս, էջ 184:

<sup>2</sup> Զոհրապ Գ., Երկեր, հ. Գ, աշխատասիրությամբ՝ Ա. Շարությունի, Ե., 2002, էջ 493:

իր իրավաֆի դար» ֆրանսերեն մենագրությունը: Ֆրանսիական մամուլի արձագանքները այս գրքի մասին գոհացրին Զոհրապին. «10 հազ. ֆրանկ տաս նե՝ Debats-ին մեջ ասանկ բան չեն գրեր. այսպես մյուս լրագրին մեջ»<sup>3</sup>:

Աշխատությունը բաղկացած է յոթ գլխից: Առաջինը չորս ենթագլխից բաղկացած ներածությունն է, որում մահմեդական իրավունքի վերաբերյալ պատմական տեղեկանքի հիման վրա ուսումնասիրվում և վերլուծվում է հպատակության (քաղաքացիության) տարբերության դեպքում ժառանգություն ստանալու արգելքը: Երկրորդ և երրորդ գլուխներում քննարկվում է հպատակության հարցը՝ ըստ շերիի և օրենքի: Հաջորդ գլուխներում վերլուծվում են հպատակության տարբերության դեպքում ժառանգություն ստանալու արգելքի իրավական հիմքերը: Վերջին՝ «Համեմատական իրավունք» վերնագրված գլխում Զոհրապը նկարագրում է այն պայմանները, որոնց դեպքում այլ երկրներում օտար քաղաքացիություն ունեցող ժառանգորդները ժառանգում են երկրի քաղաքացիներից:

1909 թ. հրատարակում է «Պատժական տեսութիւն» օրենսդրության թուրքերեն դասագիրքը, որը հիմնականում ներառում է Կ. Պոլսի իրավաբանական համալսարանում կարդացած նրա դասախոսությունները<sup>4</sup>: 1908 թ. մայիսից–1909 թ. նոյեմբերի 27-ը Զոհրապը համալսարանում դասավանդում էր «Պատժական օրենք և փիլիսոփայություն» դասընթացը: Ժամանակակիցը վկայում է. «Շարաթը երեք պահ ուներ պատժական օրենքի այս դասախոսը: Այդ պահերուն մյուս դասարանները գրեթե կը դատարկվեին և ուսանողությունը կը խուժեր մեր դասարանը, ուր հազիվ յոթը հարյուր հոգիի տեղ կար: Ու ահա անցքերը և պատուհանները խճողված էին ուսանողներով, որոնք իրենց մյուս դասերը լքած Զոհրապը կուզեին»<sup>5</sup>:

Դեռևս 1884 թ. 23-ամյա Գ. Զոհրապը արդեն առաջին կարգի փաստաբանական վկայական ուներ: Զբաղվելով փաստաբանությամբ՝ նա կարճ ժամանակում դառնում է ճանաչված և հետագայում միջազգային համբավ ձեռք բերում: Օսմանյան կայսրությունում օտարահպատակների և արտասահմանյան ընկերությունների դատերը պետության նկատմամբ Զոհրապը կարողանում էր շահել՝ հաստատելով գործնական, պաշտոնական նաև մտերիմ կապեր դեսպանությունների ղեկավարների ու աշխատակիցների հետ:

«Արևելյան մամուլը» 1887 թվականին 26-ամյա Զոհրապին բնութագրում է որպես «ազգային դիրք և տաղանդավոր ու բանիբուն իրավաբանի մը անուն ունեցող անձնավորություն»<sup>6</sup>: Տարիների ընթացքում Զոհրապը փաստաբանություն է իրականացրել եղեռնադատ (քրեական), քաղաքացիական, առևտրական, վճարակ, վերաքննիչ և ուրիշ աստիճաններում, ընդ որում՝ ունեւերերից ստացել է բարձր

<sup>3</sup> Զոհրապ Գ., նշվ. աշխ., հ. Դ, Ե., 2003, էջ 124:

<sup>4</sup> Տե՛ս Ծարուրյան Ա., Գ. Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Ե., 1996, էջ 242, տե՛ս նաև Ավագյան Ռ., Գ. Զոհրապի և Գ. Չուբարյանի իրավական միտքը, Ե., 2003, էջ 58:

<sup>5</sup> Ծարուրյան Ա., նշվ. աշխ., էջ 173:

<sup>6</sup> Արևելյան մամուլ, Բզմիր, 1887, թ. 43:

վարձատրություն, իսկ աղքատներին և պանդուխտներին օգնել ձրիաբար՝ հաճախ ինքր վճարելով դատական ծախսերը: Ձոհրապը լավագույն իրավագետի համբավ ուներ ոչ միայն հայերի շրջանում, այլ ամբողջ կայսրությունում: Ձոհրապի փաստաբանական գործունեության վերաբերյալ ընդունված է ասել, և ոչ հանիրավի, որ ոչ մի դատ տանուլ չի տվել, ավելին՝ հաճախ կարողացել է անկարելին կարելի դարձնել և շահել անհուսալի դատեր:

Ժամանակակիցը Ձոհրապի մասին գրում է. «Չեմ կարող ասել, որ նա կյանքը ճանաչում էր, որովհետև հմուտ փաստաբան էր. այլ հաստատ գիտեմ, որ նա փաստաբան էր, այլև շատ հմուտ, միայն նրա համար, որ կյանքը ճանաչում էր: Այնպես որ նրա պրոֆեսիոնալ զբաղմունքը ավելի շուտ արդյունք էր իր մարդագիտության, և գուցե այդ էր գլխավոր պատճառը, որ այդ ժամանակները Պոլսում վիտացող ի պաշտոնե փաստաբանների շարքում Ձոհրապը փաստաբան էր նախ և առաջ իր կոչումով: ...Նրա պաշտպանողականները աղմկալից հանրագիտական երևույթներ եղան...»<sup>7</sup>: Փաստաբանական որակների և հմտությունների գործադրման գլխավոր ասպարեզը Ձոհրապի համար լինելու էր Օսմանյան պետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, որտեղ նա մի առթով բարձրաձայնում է. «Ես Սահմանադրության փաստաբանն եմ»<sup>8</sup>: Սակայն մինչ այդ քաղաքական մի շարք հանգամանքների բերումով Ձոհրապը ստիպված է լինում հեռանալ երկրից: 1895 թ. մայիսին Կ. Պոլսում Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանատները Բարձր դռանն են հանձնում Հայկական բարենորոգումների ծրագիրը<sup>9</sup>: Հայերը կազմակերպում են ցույց՝ պահանջելով վերջինիս իրագործում: Ի պատասխան՝ սկսվում են հայերի զանգվածային ջարդեր գավառներում, 1896-ին՝ հայկական կոտորածներ Կ. Պոլսում<sup>10</sup>: Սկսվում են զանգվածային ձերբակալություններ: Ձեյթունում հայերն ապստամբում են, ապա 1896 թ. հունիսին Վանում դիմում են ինքնապաշտպանության<sup>11</sup>:

Հայ քաղաքական ամբաստանյալներին դատելու համար սուլթանի հրամանով ստեղծվում է Արտասովոր (արտակարգ) ատյան, որի վճիռները ենթակա չէին բեկանման և վավերացման: Հայ բանտարկյալներին պաշտպանելու համար ատյանն ընտրում է 10 փաստաբան, այդ թվում՝ Գ. Ձոհրապին: Ժամանակակցի վկայությամբ՝ կեղծ վկայությունների դեմ Ձոհրապի և մյուս հայ փաստաբանների առարկություններն ու արդարացի դիտողությունները անլսելի էին մնում, և այդ պատճառով աննշան բացառությամբ գրեթե բոլոր հայերը դատապարտվեցին: Ձոհրապին հաջողվում է «մահապատիժները իջեցնել բանտարկության»<sup>12</sup>:

<sup>7</sup> Փափագյան Վ., Մրտիս պարտքը, Ե., 1959, էջ 43:

<sup>8</sup> Ազատամարտ, օրագիր, Կ. Պոլիս, հունիս 20 / հուլիս 3, թ. 10:

<sup>9</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 246:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 968-969:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 261-263:

<sup>12</sup> Ծարուրյան Ա., նշվ. աշխ., էջ 80:

Զոհրապին Պոլսից հեռացնելու նպատակով 1902 թ. կայսերական իրադեով նշանակում են Չանդրբրի կառավարչի օգնական: Նա գրում է. «...Կառավարությունը... հայ, թուրք, պուլկար և հույն քաղաքական ամբաստանյալները դատարաններու առջև պաշտպանելու համարձակ եղանակես զայրացած՝ զիս արքորելու հրաման տված էր»<sup>13</sup>: Զոհրապը դիմում է ռուսական դեսպանատուն՝ հովանավորության խնդրանքով: Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Զինովեր նրան նշանակում է դեսպանության օգնական-թարգման: Այս հանգամանքը նպաստում է, որ միառժամանակ Զոհրապը զերծ մնա արքորից:

1905 թ. Պոլսում մահափորձ է կատարվում Աբդուլ Համիդի դեմ: Սկսվում են խուզարկություններ և ձերբակալություններ: Ձերբակալում են նաև Զոհրապին: Թեռդիկը գրում է. «Մասնախուցի մը մեջ (որուն կարմիր վարագույրին ետև «Կարմիր սուլթանը» կապասե՝ զաղտագողի ունկնդիր) Զոհրապը կհարցաքննվի՝ իր խելքին փտորն իսկ չարժող չգիտեմ ո՞ր պեյի կողմե...»<sup>14</sup>: Մի քանի օր անց Զոհրապն ազատվում է բանտից: Սակայն մեկ տարի հետո արդարադատության նախարարը նրան հայտնում է, թե ռուսական դեսպանության թարգմանչի պաշտոնը և օսմանյան փաստաբան լինելը անհամատեղելի են<sup>15</sup>: Առիթը Զոհրապի կողմից բուլղար մի հեղափոխականի դատի պաշտպանությունն էր: Զրկված լինելով փաստաբանական գործունեությունից՝ Զոհրապը հաճախակի մեկնում է արտասահման: Նա 1908 թ. մայիսին Փարիզում էր՝ մասնագիտությամբ աշխատանք գտնելու մտադրությամբ:

Երիտթուրքական հեղաշրջումը նշանավորվեց 1876 թ. սահմանադրության գործողությունը վերականգնելու և Օսմանյան երեսփոխանական ժողով գումարելու մասին 1908 թ. հուլիսի 24-ի սուլթանական իրադեով (հրամանագրով)<sup>16</sup>: Ներում շնորհիվեց քաղաքական մեղադրյալներին: Վերացվեց գրաքննությունը: Ոգևորության ընդհանուր մթնոլորտում Կ. Պոլսում և կայսրության այլ խոշոր քաղաքներում տեղի ունեցան զանազան ազգությունների և դավանանքների ներկայացուցիչների եղբայրացման ցույցեր:

Երիտթուրքական հեղաշրջման նկատմամբ հայ քաղաքական կուսակցություններից մեկի դիրքորոշումը հետևյալն էր. «Բերկրանքով ողջունեցինք Օսմանյան սահմանադրությունը, ոչ մի անջատական ձգտում, ոչ մի խոսք այլևս եվրոպական միջամտության, 61-րդ հոդվածի մասին, դադարեցուցինք «Պրո Արմենիան» ու եվրոպական պրոպագանդը՝ լծվելով մեր իսլամ դրացիներու հետ՝ ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրության առաջադիմության և բարօրության»<sup>17</sup>: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, կրկնօրինակելով ֆրանսիական հեղափոխության կարգախոսները՝ «Ազատություն», «Հավասարություն»,

<sup>13</sup> Զոհրապ Գ., նշվ. աշխ., հ. 7, էջ 145:

<sup>14</sup> Շարուրյան Ա., նշվ. աշխ., էջ 128:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>16</sup> Տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011, էջ 604:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 605:

«Եղբայրություն», առաջադրեց «միասնական և անքակտելի Օսմանյան կայսրության պահանջը և ապացուցում էր, որ Թուրքիայում չկան առանձին ազգեր, որ բոլորը օսմանցիներ են»<sup>18</sup>: Երիտթուրքերի հռչակագրում ասվում էր. «Այսուհետև մենք բոլորս եղբայրներ ենք: Այլևս չկան բուլղարներ, հույներ, ռումինացիներ, հրեաներ, մահմեդականներ, միևնույն կապույտ երկնքի տակ մենք բոլորս հավասար ենք, մենք ծնվում ենք օսմանցի լինելու համար»<sup>19</sup>: Խոստումների զանցառման, խուսի և գործի հրեշավոր հակասության դասական օրինակ, որ XX դարասկզբին դրսևորեցին թուրք կառավարողները: Հայերը ևս կայսրության բոլոր մյուս հպատակների նման հավատ ընծայեցին բաղձալի խոստումներին:

Ազգային Կեդրոնական վարչության Խառն ժողովը որոշում է ըստ Սահմանադրության ամբողջովին վերակազմել Ազգային երեսփոխանական ժողովը և կատարել ընտրություններ:

Հուլիսի 14-ին «Արևելք» օրաթերթը գրում է. «Ծանոթ գրագետ և փաստաբան Գրիգոր Չոհրապ քանի մը ամիսներ ի վեր Բարիզ կը գտնվեր: Հոս իր խիզախ ոգիին համար դատարաններուն մեջ արգիլվեցավ և նույնիսկ գրաքննիչներու անիմաստ առարկություններովը կարգիվեր անունը... այս անգամ ուրախությամբ կը լսենք, որ պիտի վերադառա Պոլիս»<sup>20</sup>: Ապա հուլիսի 22-ին օրաթերթը ծանուցում է Չոհրապի վերադարձը. «Բաղձալի է, որ տաղանդավոր փաստաբանը ձեռք առնէ իր գրական և իրավագիտական գործունեությունը. հիմա, որ ամենից ավելի ասպարեզ կը գտնէ իր խիզախ գրչին՝ գրականության մեջ և անկողմնակալ ու ճշմարտադատ ունկնդրություն՝ դատարաններուն մեջ»: Հասնելով Կ. Պոլիս և ոգևորված Թուրքիայում մոտայուտ ելրուպական ազատամտության ու սահմանադրական կարգերի տեսլականով՝ Չոհրապը ձեռնամուխ է լինում Օսմանյան Սահմանադրական ակումբի հիմնման գործին, որոշում է «Նոր օր» անունով օրաթերթ հրատարակել:

Արշակ Չոպանյանին հղած նամակում նա գրում է, որ երիտթուրքերը «Ճշմարտապես ազատամիտ և մասնավորապես հայերու հանդեպ ամեն առիթով ազնվության և բարեկամության հազար տեսակ ապացույցներ տալու վրա են», և ըստ նրա՝ հայերը դրանից պետք է օգտվեն: Հայտնելով իր ձեռնարկումներ մասին՝ Չոհրապը գրում է. ««Նոր օր» մեր ազգային պաշտպանության հզոր գործիք մը պիտի դարձնեն»<sup>21</sup>: Հուլիսի 31-ին Չոհրապը Թաքսիմի պարտեզում բանախոսում է սուլթանական կամայականությունների դեմ մղված պայքարում զոհված հայ և իսլամ նահատակների հիշատակին նվիրված սգահանդեսում: Այս կապակցությամբ որդուն՝ Լևոն Չոհրապին հղած ֆրանսերեն նամակում մասնավորապես գրում է. «Կազմակերպեցի հիսունհազարանոց հանրահավաք, որտեղ իմ ելույթը հավանության արժանացավ և դարձավ խանդավառ ցնծության առարկա: Թուրքերը համբուրում էին ինձ, ձեռքերի վրա տանում»<sup>22</sup>:

<sup>18</sup> Миллер А. Ф. Краткая история Турции, М., 1948, с. 127.

<sup>19</sup> Տե՛ս Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 605:

<sup>20</sup> Արևելք, օրաթերթ, Կ. Պոլիս, 14.07.1908:

<sup>21</sup> Չոհրապ Վ., նշվ. աշխ., հ. 7, էջ 140:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 148:

«Արևելքը» արձանագրում է. «Ընդհանուր հիացումներու մեջ բեմ կանգնեցավ թրքահայ անգուզական գրագետ և փաստաբան Գրիգոր Զոհրայ, որուն պերճախոսությանը շատոնցե կարոտը կը քաշվեր... Զոհրայ էֆենտիի ճառը աննման խանդավառության արժանացավ և տեղ-տեղ կրկնել տրվեցավ: Թուրքերը համբուրելով հայ նշանավոր տաղանդը, խոստովանեցան, թե երկար ատենե թուրքերեն այդքան գեղեցիկ ճառ չէր արտասանված»<sup>23</sup>: Ոգնորված երիտթուրքական հեղաշրջմամբ, վստահություն ընծայելով նրանց խոստումներին՝ երկրի լավագույն ապագայի հավատով՝ Զոհրայն իր էլույթում ասում է. «Դավանություննիս տարբեր, բայց կրոնքնիս մեկ է. ամենուս ալ կրոնքն ազատությունն է: Օսմանյան կառավարության ասկե ետք ունենալիք կազմակերպության և գործունեության մասին խորհրդածություն չպիտի ընեմ. մեր քաղաքական հորիզոնին վրա մեկ քանի ամպեր աչքի կը զարնեն: Վստահ եմ, որ ասոնք ալ մարդասիրական հովին չկարենալով դիմանալ՝ պիտի ցրվին, երթան:... Ժամանակի փոփոխության հետ օրենքներու փոփոխության օրինական տրամադրությունն իր ամբողջական նշանակությամբ և առումով գործադրելու պիտի աշխատինք»<sup>24</sup>:

Զոհրայը օգոստոսի 16-ին Սամաթիայի Սահակյան վարժարանում հանդես է գալիս բանախոսությամբ՝ «Օսմանյան սահմանադրության վերաքննությունը» թեմայով: Վկայակոչելով հայերի 1863 թ. Ազգային սահմանադրության՝ Օսմանյան կայսրությունում առաջինը հաստատվելու իրողությունը՝ բանախոսը նշում է. «Հայերը, և ասիկա պզտիկ պատիվ մը չէ իրենց համար, Օսմանյան երկրին վրա ուրիշ ազգերեն քիչ մը ավելի սահմանադրական հարցերու հետ ընտանություն ունին: Մեր Ազգային սահմանադրությունը, իր թերի ու քննադատելի կողմերը ունենալով հանդերձ, իրական իրավունք մը պահանջելու ու պահպանելու գաղափարին վարժությունը կանուխեն ներմուծած են մեր մեջ: Հիմա որ օսմանյան Սահմանադրության պիտի աշխատակցինք, կրնանք ըսել, որ բոլորովին խակ գործավոր մը չենք սեպվիր»<sup>25</sup>: Զոհրայը հիմնավորում է 1876 թ. Սահմանադրության վերաքննության անհամաձայնությունը, ներկայացնում Սահմանադրության՝ փոփոխության ենթակա հոդվածները:

Ընտրական իրավունքի վերաբերյալ Զոհրայի տեսակետը այսօր կարող է սովորական թվալ, սակայն 100 տարի առաջ, այն էլ Օսմանյան պետության մեջ՝ աննախադեպ էր: Նա ասում է. «20-րդ դարին մեջ ընտրելու իրավունք ունե սեղմումի չի կրնար ենթարկվի: Ամեն չափահաս անձ ընտրող պետք է ըլլա»<sup>26</sup>: Բացատրությունը հիմնավոր է. «Չէ՞ որ իրավունքը պարտականության դեմ կը գտնըվի: Քանի որ ամեն չափահաս անձ՝ քաղաքացիի մը բովանդակ պարտականությանց ենթական է, արդար է, որ փոխադարձաբար անոր բովանդակ իրավունքները վայելե»<sup>27</sup>: Երկրում դեռևս չքրննարկված հաջորդ խնդիրը, որ բարձրացնում է Զոհրայը, կանանց քաղաքական իրավունքի խնդիրն էր: Նա համոզում ուներ. «Շատ շատ տասը տարիեն այդ

<sup>23</sup> Արևելք, 1.08.1908:

<sup>24</sup> Զոհրայ Գ., նշվ. աշխ., հ. Ե, Ե., 2004, էջ 52:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>27</sup> Նույն տեղում:

իրավունքը գեթ իր մասնակի գործածությունը պետք է որ ստանա մեր մեջը»<sup>28</sup>: Անդրադառնալով ազգերի խնդրին՝ Չոհրապը գիտակցում էր, որ վերջինս կնճռոտ հարց է անգամ լուսավորյալ Եվրոպայի համար, և հաստատում էր գոյությունը պահպանելու ու զարգանալու յուրաքանչյուր ազգի իրավունքը: Վկայակոչելով Օսմանյան սահմանադրության հիմնադիրներից մեկին՝ Գրիգոր Օտյանին, Չոհրապը որպես դրվատելի օրինակ է պարզում նրա՝ ճշմարիտ հայ ու նույնքան ճշմարիտ օսմանցի լինելու հանգամանքը: Սակայն վեց տարի անց երիտթուրքերի խոստումնազանցության բազում օրինակներից սթափված Չոհրապն իր հարցազրույցներից մեկում հայտարարում է. «Ես նախ հայ եմ, ապա օսմանցի. և իբրև այն կուզեմ ապրիլ»<sup>29</sup>:

1908 թ. Խառն ժողովի որոշմամբ տեղի ունեցան Ազգային երեսփոխանական ընտրություններ: Օգոստոսի 24-ին Սամաթիա-Թոփզաբուի ընտրություններում Չոհրապը քվեների բացարձակ մեծամասնությամբ ընտրվեց ազգային երեսփոխան:

Առջևում Օսմանյան խորհրդարանի ընտրություններն էին:

Հուլիսի 13-ի կայսերական հրովարտակով հրամայվում էր սկսել խորհրդարանական ընտրությունները: Հայերին հատկացվել էր ընդամենը տասը տեղ, որից երկուսը՝ Պոլսում: Կազմվեց պատրիարքական հանձնաժողով, որում ընդգրկվեց նաև Չոհրապը: Սեպտեմբերի 5-ին Օսմանյան սահմանադրական ակումբը և Հայ-օսմանյան միության սահմանադրական ժողովը գաղտնի քվեարկությամբ մայրաքաղաքից ընտրելիներ առաջարկեցին Գ. Չոհրապին և հանրային պարտուց վարչության իրավագետ-խորհրդական Պետրոս Հալաճյանին: Այս կապակցությամբ մամուլը գրեց. «Չոհրապ այնքան ծանոթ է իր միջազգային համբավով և օրենսգիտական մեծ հմտությամբ ու պերճախոսությամբ, որ ավելորդ կը համարինք իր վրա խոսիլ»<sup>30</sup>: Չոհրապի առաջարկությամբ ստեղծվեց Սահմանադրական հայ մարմին, որը հայ երեսփոխանների համար կազմեց 30 կետից բաղկացած ծրագիր՝ ազգային խնդիրները «օսմանյան հայրենիքի» համակարգում լուծելու համար:

Սակայն զգուշանալով Չոհրապի՝ պետական բարձր աստիճանում գտնվելու հանգամանքից՝ թուրքական մութ ուժերը նրա վերաբերյալ մի սադրիչ տեսակետ շրջանառեցին. ինչպե՞ս կարող է օսմանյան պատգամավոր դառնալ մի մարդ, որը ռուսական դեսպանատան մեջ «պաշտոն ունի»<sup>31</sup>: Նա ստիպված էր բացատրություն տալ, թե «ռուս դեսպանատան իբրև փաստաբան-խորհրդական ապավինելը» իր «հպատակության մեջ փոփոխություն առաջ բերած չէ»<sup>32</sup>: Այս բացատրությունները բանական համարվեցին, և Բթթիհադի կոմիտեն հաստատեց Չոհրապի

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Նույն տեղում, հ. 2, Ե., 2004, էջ 145:

<sup>30</sup> Մանգումեի էֆթյար, Կ. Պոլիս, 8.09.1921:

<sup>31</sup> Տե՛ս Ծարուրյան Ա., նշվ. աշխ., էջ 19:

<sup>32</sup> Չոհրապ Գ., նշվ. աշխ., հ. Ե, էջ 107:

թեկնածությունը: Սակայն շուտով Կոմիտեն, դրժելով իր խոսքը, պահանջեց, որ Զոհրայի փոխարեն ուրիշ թեկնածու առաջադրեն: Այդ ժամանակ Սահմանադրական հայ մարմինը միաձայն ընդունեց բանաձև, որով դժգոհություն էր հայտնում «հայոց դեմ խաղացված էնթրիկներուն համար» և հայտարարում, որ, էթե Կոմիտեն չհարգի Մարմնի որոշումը, ապա «ազգը պիտի չուզե մուտք գործել Օսմանյան խորհրդարան»<sup>33</sup>: Կոմիտեն տեղի տվեց: Իր ընտրության այս «ազգային հանգամանքը» խիստ գոհացրել ու քաջալերել էր Զոհրային<sup>34</sup>: Զոհրայը Օսմանյան խորհրդարանի պատգամավոր ընտրվեց նա երկու անգամ՝ 1912 թ. ապրիլին և 1914 թ. փետրվարին:

1908 թ. դեկտեմբերի 4-ին Օսմանյան նորընտիր խորհրդարանը սկսում է աշխատանքները: Խորհրդարանի 265 երեսփոխաններից 125-ը թուրք էին, 70-ը՝ արաբ, 25-ը՝ այլբանացի, 23-ը՝ հույն, 10-ը՝ հայ<sup>35</sup>, 4-ը՝ բուլղար, 4-ը՝ հրեա, 3-ը՝ սերբ և մեկը՝ ուլահ, 63 պատգամավոր հոճա էր (կրոնավոր):

Կատարելապես տիրապետելով խորհրդարանի պաշտոնական լեզվին՝ թուրքերենին, գործի դնելով հռետորական արվեստի բոլոր նրբությունները՝ հմուտ իրավագետ Գ. Զոհրայը իր իրավագիտության մեջ համոզված անձի վստահությամբ ու քաղաքացիական կորովով հանդես էր գալիս օրենսդրական նախաձեռնություններով, առաջարկություններով, ներկայացնում բանաձևեր, հուշագրեր, անդամակցում խորհրդարանական տարբեր հանձնաժողովների: Նա էլմտական (բյուջետային) հանձնաժողովի նախագահն էր, սահմանադրական օրենքի, բյուջետային օրինագծերի և գահաձառի պատասխանը խմբագրող, դատական հանձնաժողովների անդամ, Ծովային նախարարության տեղեկաբեր: Թուրք փաստաբանը (Շերեֆ էֆենտին) մի հարցազրույցում Զոհրայի վերաբերյալ ասում է. «Մեկ բանագետ ու հմուտ հռետոր մը կա ժողովրդին մեջ, մեկ հոգի միայն տեսա, այն ալ Զոհրայն է... Զոհրայի նման խոսող Եվրոպայի խորհրդարաններու մեջ ալ քիչ կը գտնվի»<sup>36</sup>: Անդրանիկ խորհրդարանի առաջին նիստերից մեկում Զոհրայն իր գործունեությունը սկսում է աշխատակարգի վերաբերյալ ելույթով: Նա պնդում է, որ սխալ է, երբ օրակարգի հարցերը որոշում է նախագահը, ըստ նրա՝ Ընդհանուր ժողովը պետք է որոշի օրակարգը:

Զոհրայը մասնակցում է գրեթե բոլոր քննարկումներին: Նրա համար չկային մեծ ու փոքր, կարևոր ու ոչ կարևոր հարցեր. բոլոր քննարկումներում դրսևորում էր փորձառու իրավագետի խորագիտություն: Սահմանադրական կարգի վերաբերյալ

<sup>33</sup> Տե՛ս Շարուրյան Ա., նշվ. աշխ., էջ 19:

<sup>34</sup> Զոհրայ Գ., նշվ. աշխ., հ. 2, էջ 145:

<sup>35</sup> Զոհրայից ու Հալաճյանից բացի՝ հայ պատգամավորներն էին Նազարեթ Տաղավարյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Հակոբ Պապիկյանը, Վարդգես Մերենկյույանը, Ստեփան Սպարթայանը (Սփարթայի), Համբարձում Պոյաճյանը (Մուրատ), Գարեգին Բաստրմաջյանը (Արմեն Գարո) և Վահան Փափագյանը:

<sup>36</sup> Ժամանակ, Կ. Պոլիս, 8.06.1910:



Եվրոպական փորձի քաջատեղյակությունը նրան հնարավորություն է ընձեռում ծավալելու օրենսդրական հիմնավոր գործունեություն: 1909 թ. մարտի 18-ի նիստում «Դատարկապորտների օրինագծի» մասին իր առարկություններն է հայտնում մարմնական պատժամիջոցների վերաբերյալ՝ անկարելի համարելով նման օրենքի ընդունումը. ծեծը՝ որպես պատժամիջոց, նվաստացումի հանգամանք ունի և նախատինք է ազգի դեմ: Վկայակոչելով իրավունքի եվրոպացի տեսաբաններին և իրավունքի փիլիսոփայության դիրքերից քննելով խնդիրը՝ նա պարզաբանում է. «Գիտությունն հիվանդ մը, ընկերական ախտով վարակյալ մը կնկատե դատարկապորտ մարդը: Մի՞թե հարկ է զինքը ծեծել դարմանելու և բուժելու համար»<sup>37</sup>:

Չոհրապը 1910 թ. հունվարին խորհրդարան է մտցնում պատժական օրենսդրության իր նախագիծը: Նա պատժական օրենքի կիրառման համար առաջարկում է ինը նոր հոդված: Օրինագծին կից հիշատակագրում Չոհրապը ներկայացնում է հիմնավորումներ և մեկնաբանություններ: Ըստ նրա՝ ոճիրները կանխելու և դրանց կրկնվելն արգելելու համար վաղուց ի վեր գործադրվող խստիվ պատժելու ուղղությունը, բացի հակառակ հետևանքներից, ուրիշ արդյունք չի տվել: Վկայակոչելով պատժիչ իրավունքի եվրոպացի տեսաբանների տեսակետները (համաձայն որոնց՝ ոճիրների և ոճրագործների նվազեցումը կախված է նրանց հոգեկան և մարմնական, երբեմն նաև առողջական վիճակի բարեփոխումից, ուստի խստությունից ավելի մեղմացումի հետամտությունն է, որ օգտակար է դառնում)՝ Չոհրապը փաստում է, որ վերջին 30 տարիների ընթացքում Եվրոպայի օրենսդրության մեջ մեծագույն փոփոխություններ են կատարվել: Նա կարևորում է այն դրույթը, որ պատժելու գաղափարը չպետք է հիմնված լինի վրիժառության ոգու վրա: «Պատժի փիլիսոփայությունը այն գաղափարին մեջ կը կայանա, որ հնարավորությունն գրկե հանցապարտը՝ իր հանցանքը կարենալ կրկնելու և ընկերության վնասելու», - գրում է Չոհրապը, ապա հավելում,- «Պատիժները ուրեմն կրթական բնույթ ունեցող միջոցներ, պատժարանները՝ կրթիչ հիմնարկություններ պետք է ըլլան»<sup>38</sup>: Առաջ անցնելով եվրոպացի օրենսգետներից՝ Չոհրապը քաղաքական հանցանքների վերաբերյալ մասնավորեցնում է այն սկզբունքը, որ քաղաքական-պատժական դատերի ժամանակ դատապարտյալներ չկան, կան պարտվածներ: Քաղաքական դատապարտյալները մի տեսակ պատերազմական գերիներ են և հետևաբար պատժի հետաձգմանն ամենից ավելի արժանի քաղաքական հանցապարտներ:

Պատգամավորն առաջարկում է մի շարք հանցանքների համար թեթևացնել պատիժները, բավարարվել «հորդոր-հանդիմանությամբ»: Հանցապարտի պատասխանատվության սահմանը որոշելու համար քննության և նկատի ունենալու

<sup>37</sup> Չոհրապ Գ., նշվ. աշխ., հ. Ե, էջ 194:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 320:

հիմնական պայմանները Զոհրայը համարում է տարիքը, բարքն ու համբավը, ուժի միտումը և մեղավորի գոյումը: Պատժական օրենսդրության՝ Զոհրայի նախագծի վերաբերյալ «Ազատամարտը» տպագրում է «Զոհրայի օրինագիծը. անապատի մեջ ովասիս» գրախոսականը: Հեղինակը օրինագիծը համարում է «եզակի իր տեսակին մեջ», որը «կուզա գիտության խոսքերով ու սկզբունքներով օսմանյան օրենսդրության մեջ նոր դարազույն մը բանալու»<sup>39</sup>:

Զոհրայը գործուն մասնակցություն բերեց մամուլի մասին օրինագծի խորհրդարանական քննարկումներում: Պահանջելով այլևս չխստացնել արդեն իսկ խիստ օրենքը՝ նա պաշտպանեց մամուլի իրավունքը և հանդես եկավ այդ իրավունքը սահմանափակող մի շարք առաջարկների դեմ:

1909 թ. ապրիլի 20-ի նիստում ընդունվեցին Սահմանադրության վերաքննության օրենքի վերաբերյալ նրա ուղղումները<sup>40</sup>:

Հունիսի 22-ին զինվորական տուրքի օրինագծի վերաբերյալ նա հայտարարում է, որ զինվորական տուրքը քրիստոնյաների պարագայում հակասում է Սահմանադրությանը, քանի որ Սահմանադրության համաձայն՝ բոլոր օսմանցիները զինվոր պետք է տան, և որ քրիստոնյաների համար զինվորագրության պահանջը ոչ թե նյութական նկատառումներ ունի, այլ իրավահավասարության երաշխիք է<sup>41</sup>: Հունիսի 29-ին խորհրդարանն ընդունում է որոշում՝ ընթացիկ տարվանից քրիստոնյաներին նույնպես զորակոչել բանակ<sup>42</sup>: Զինվորագրության օրենքի մեջ և համապատասխան օրինագծի քննարկումներին ևս Զոհրայը գործուն մասնակցություն ունեցավ: Զինվորական ծառայության 20 տարվա ժամկետը 25-ի վերափոխելու՝ Պատերազմական նախարարության առաջարկի դեմ նա հանդես եկավ առարկությամբ, որն արժանացավ խորհրդարանի բռուն հավանությանը: Իր ելույթում նա մասնավորապես ասաց. «Պատերազմը, որուն համար կուզենք պատրաստել զինվորը, երկու տեսակ է: Չենքի պատերազմեն գատ կա տնտեսական պատերազմը, վաճառականության ու քաղաքակրթության պատերազմը, որն ավելի կարևոր է: Ով այս պատերազմին մեջ կը պարտվի, չի կրնար զենքի պատերազմին մեջ հաղթել»<sup>43</sup>: Նա անհիմն ու սխալ է համարում առանց այդ էլ երկարաժամկետ զինվորական ծառայությունը, որն ուղղակիորեն և անուղղակիորեն խոչընդոտում է երկրի տնտեսության զարգացմանը, ևս 5 տարով երկարաձգել: Ուսանողների զինվորագրության օրինագծի վերաբերյալ Զոհրայը պնդում է, որ Եվրոպայում ուսանող երիտասարդներին, որոնք այնքան էլ շատ չեն, ազատել զինվորական ծառայությունից<sup>44</sup>: Նա դեմ արտահայտվեց զինվորական հարկը (բեդեյ) վերացնելու այն պատգամավորների առաջարկներին, որոնք իբր օրինակ էին բերում Եվրոպան: Զոհրայը հանգամանեց. «Եվրոպիո մեջ միայն զենքով չէ որ կպատերազմեն, այլ տնտեսական տարբեր զենքերով: ...Եթե եվրոպական պետությանց կրնանք հավասարիլ

<sup>39</sup> Ազատամարտ, հունվար 23, թ. 191:

<sup>40</sup> Զոհրայ Գ., նշվ. աշխ., հ. Ե, էջ 215:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 252-254:

<sup>42</sup> Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 30.06.1909:

<sup>43</sup> Զոհրայ Գ., նշվ. աշխ., հ. Զ, էջ 94:

<sup>44</sup> Զոհրայ Գ., նշվ. աշխ., հ. Ե, էջ 436:

զինվորական տեսակետով, բայց երբեք չենք կրնա հավասարիլ տնտեսական զարգացման տեսակետով»: Այդ պատճառով էլ, ըստ Ջոհրապի, անհրաժեշտ է պահել զինվորական հարկի մասին օրենքը, որպեսզի փրկանք վճարելով զինվորությունից ազատ մնացողները զարգացնեն երկրի «վաճառականությունը, ճարտարարվեստը, հողագործությունը և գիտական ճյուղերը»<sup>45</sup>: Ջինվորական հարկը հասարակության տարբեր խավերի համար պետք է տարբեր լինի. հարկավոր է գործադրել «համեմատական բաշխման սկզբունքը»:

Մեկ այլ՝ կալվածատուրքի օրինագծի շուրջ ելույթ ունենալով խորհրդարանում (1910 թ. ապրիլ 6, 7)՝ Ջոհրապը պաշտպանում է հառաջատվական դրությունը, ըստ որի «ամեն քաղաքացի պարտավոր է երկրին ծախքերուն մասնակցիլ այն դիրքին համաձայն, զոր կը գրավե մարդկային ընկերության մեջ և այն չափով, որով կը նպաստավորվի մարդկային ընկերութենեն»<sup>46</sup>: Քննադատելով ելմրտական նախարարին՝ նա պահանջում է կալվածատուրքի հարցում առաջնորդվել «ընկերաբանական սկզբունքներով», ամենից առաջ հաշվի առնել «աղքատներուն իրավունքները»<sup>47</sup>:

Բյուջեի օրինագծի առթիվ քննադատելով կառավարության ելմրտական և տնտեսական քաղաքականությունը՝ Ջոհրապը դեմ է արտահայտվում օտար տերություններից ակնկալվող դրամական փոխառություններին, որոնց մեջ կանխատեսում է Թուրքիայի ազդեցությունը օտար տերություններից. «Մեր մեջ փոխառությունը այն չէ, ինչ է օտար երկիրներու համար, ուր կառավարությունը ընդհանրապես իր ժողովուրդեն կը կնքե իր փոխառությունները: Մենք մեր պյուտճեն հավասարակշռելու համար պետք եղած դրամը պետք է առնենք օտարեն, ինչ որ այսօր կը նշանակե օտարին ազդեցության ենթարկվիլ»<sup>48</sup>:

Բյուջետային հարցի քննարկման ժամանակ Ջոհրապը առարկում է բյուջեի պակասը լրացնելու համար տուրքերի ավելացման միջոցի դեմ՝ բերելով հիմնավոր բացատրություն. «Հեղափոխությունները առաջ կուգան տնտեսական նեղություններե, այսինքն՝ տուրքերե: ...Պետություն մը սահմանադրական ըլլալու համար միայն իր պյուճեին բացը գոցելու մտահոգությունը բավական չէ, պետք է արդարություն ապահովել: Եթե հարուստն ու աղքատն իրենց կարողության համեմատ տանին պետության ծախքերուն բեռը, այն ատեն է որ Սահմանադրությունն իրապես կհաստատվի երկրին մեջ և ա՛լ հարկ չի մնար ո՛չ պաշարման վիճակի և ոչ ուրիշ բաներու»<sup>49</sup>:

Կրթական բյուջեի քննարկման ժամանակ հանդես գալով որպես տեղեկաբեր՝ Ջոհրապը պնդում է, որ կրթական բյուջեն նույնքան կարևոր է, որքան

<sup>45</sup> Ջոհրապ Գ., նշվ. աշխ., հ. 2, էջ 94:

<sup>46</sup> Նույն տեղում, հ. Ե, էջ 344:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 345-347:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 348:

<sup>49</sup> Ջոհրապ Գ., հ. 2, էջ 127:

պատերազմականը. «Այս վերջինին հետապնդած նպատակն է երկրին գորեղացումը և որովհետև այժմ բազուկով ուժեղ եղողները չեն որ գորավոր կը նկատվին, այլ ուղեղի ույժ ունեցողները, ամեն մարդ կընդունի, թե կրթական պյուճեն է, որ ամենեն ավելի պիտի կարենա ապահովել երկրին գորացումը»<sup>50</sup>:

Զոհրապի առաջարկած վերոհիշյալ և բազմաթիվ այլ օրինագծերը, ինչպես նաև օրինագծերի վերաբերյալ նրա ուղղումներն ու լրացումները միտված էին երկրի ազատականացմանն ու ժողովրդավարացմանը: Որպես իրավաբան՝ Զոհրապը կողմնակից էր այնպիսի պետության, որտեղ գերակայելու էր օրենքը, որը պետք է «չնչին ու օգտակար դեր մը ունենա ամենուն-ամենեն առաջ անոնց, որոնք ուրիշէ մը ավելի պետք ունին-վիճակին բարելավությանը ծառայե, ներդաշնակություն մը հառաջ բերե»<sup>51</sup>: Մակայն նրա առաջադիմական հայացքները վաղաժամ էին միապետական բռնատիրությունը դեռ ամբողջովին չթոթափած օսմանյան պետության համար:

Զոհրապը 1911 թ. նոյեմբերի 19-ին էլույթ է ունենում Ազգային ժողովի նիստում՝ հարստահարությունների վերաբերյալ օսմանյան հայ երեսփոխաններին ուղղված հարցման առիթով: Նա առաջարկում է նիստը դոնփակ անցկացնել, դուրս է հրավիրում մամուլի ներկայացուցիչներին: Բացատրություն տալով օսմանյան հայ երեսփոխանների գործունեության վերաբերյալ՝ Զոհրապն ասում է. «Միայլ է ենթադրելը, թե Մահմանադրության հաստատվելովը երկրին ամեն կողմը այլևս կարգ ու կանոն հաստատված է, և մեր՝ այս ռեժիմին վրա հիմնված ակնկալություններն ու հույսերն իրականացած են»<sup>52</sup>: Նա նշում է. «Իբրև օսմանյան խորհրդարանին անդամ պատեհապաշտ, խոհեմ և զգույշ քաղաքականության մը հետևած ենք, քանի որ իրական Մահմանադրություն մը դեռ հաստատված չէ այս երկրին մեջ»: Հավասարությունը համարելով Մահմանադրության «առաջին պայմանը»՝ Զոհրապը արձանագրում է, որ հավասարության բացակայությունն «ամեն տեղ, նույնիսկ Խորհրդարանին մեջ է», և բացատրում է, որ քրիստոնյաները կազմում են երկրի ազգաբնակչության մեկ երրորդը կամ մեկ չորրորդը, մինչդեռ օսմանյան խորհրդարանում ներկայանում են պատգամավորների կազմի մեկ յոթերորդով, որ խորհրդարանի առաջին նախագահությունը գոնե չորս տարին մեկ պետք է քրիստոնյայի վիճակվեր, մինչդեռ միայն մեկ անգամ, այն էլ երրորդ նախագահությանը քրիստոնյա հրավիրվեց, ո՛չ Դիվանում (քարտուղարությունում), ո՛չ օրենսդրական հանձնաժողովներում երբեք ոչ իսլամ նախագահ չընտրվեց: Նա նաև դիտարկում է, որ «կա թուրք մտայնություն մը, որ իր բարձրացումը իրմե ավելի հառաջադեմ եղող տարրերուն փչացումեն կ'ակնկալե»<sup>53</sup>: Եվ Զոհրապը չէր սխալվում: Նա ևս այդ մտայնության գոհը դարձավ: Խորհրդարանի նիստերին Զոհրապի մասնակցության վերջին վկայությունը թվագրված է 1915 թ. փետրվարի 4-ով. «Խորհրդարանի նիստում մասնակցում է (Զոհրապը – Գ. Մ.) թաղապետական

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 295:

<sup>51</sup> Նույն տեղում, հ. Ե., էջ 57-58:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 27:

տնօրենների ամժամյա օրինագծի քննարկմանը: Ելույթ է ունենում որպես էլմտական օրենքների հանձնաժողովի նախագահ<sup>54</sup>:

Պոլսում ոստիկանությունը 1915 թ. ապրիլին նախապես կազմած ցուցակներով ձերբակալում է հայ մտավորականներին: Մայիսի 22-ին (հունիսի 4-ին) ձերբակալում են Գ. Չոհրապին և ուղարկում Դիարբեքիր՝ Պատերազմական աստյանում դատելու համար: Տերության առաջնակարգ փաստաբան, օսմանյան խորհրդարանի երեսփոխան Չոհրապը սկզբնապես, իր իսկ խոստովանությամբ, վստահ էր, թե ոչ մի դատ տանուլ տված չլինելով՝ մի թե ինքր չի կարող սեփական դատը պաշտպանել: Սակայն այդ հնարավորությունը նա չունեցավ: Հուլիսի 6-ին (հունիսի 19-ին) ճանապարհին՝ Ուրֆայի մոտ, թուրքերը վայրագությամբ սպանեցին նրան: Սպանեցին, քանի որ նա հայ էր, տաղանդավոր էր ու համարձակ: Այսպես վարձա-հատույց եղան թուրքերը Չոհրապին՝ որպես քաղաքացի, պատգամավոր, օրենսգետ՝ տերությանը մատուցած անգնահատելի ծառայությունների համար: Թեև այսօր Թուրքիայի խորհրդարանի պատին փակցված նշանավոր օրենսդիր-խորհրդարանականների ցուցակում կա նաև Գրիգոր Չոհրապի անունը:

**ЮРИДИЧЕСКАЯ И ЗАКОНОДАТЕЛЬНАЯ  
ДЕЯТЕЛЬНОСТЬ ГРИГОРА ЗОГРАПА**

ГЕВОРКЯН М. Г.

**Резюме**

Григор Зограп был известным юристом, который занимался также законодательной деятельностью, будучи членом османского парламента в 1908-1915 гг.

Все законопроекты, разработанные Зограпом, были нацелены на демократизацию и либерализацию турецкого общества, поскольку как юрист Зограп был сторонником государства, основанного на демократии и приоритете закона.

<sup>54</sup> Շարուրյան Ա., նշվ. աշխ., էջ 460: